ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի մայիսի 21-ի որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/54

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/54» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի մայիսի 20-ին, ժամը 23:20:50-ին, էլեկտրոնային գնումների Armeps համակարգով ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2025 թվականի մայիսի 21-ին տրամադրված պարզաբանումները:

Հարցադրում N 1

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնանորոգվող շենքի ռիսկայնությունը 4-րդ կատեգորիայից ցածր է, կարող ենք արդյոք մասնակցել <Կապի համակարգեր> 2-րդ դասի լիցենզիայով / հավաստագիրը 1-ին դասի է/:

Պարզաբանում N 1

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոց» ՊՈԱԿ-ի շենքն ընդգրկված է ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում որպես հանրապետական նշանակության հուշարձան և հրավերի տեխնիկական-բնութագրում նշված է, որ նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր շենքի ներքին ինժեներական ենթակառուցվածքների /կոյուղու, սառը և տաք ջրամատակարարման և ջրահեռացման, էլեկտրամատակարարման, օդափոխության, կապի, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, գազամատակարարման, ջեռուցման և այլն/ արդիականացման/նորի կառուցման պահանջը, ուստի հրավերով պահանջվել է, որ Մասնակիցը պետք է ունենա կապի համակարգերի (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ) 1-ին դասի հավաստագիր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/54» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արմինե Սահակյանին:

Հեռախոս՝ +374 (10) 599-656:

Էլեկոտրանային փոստ՝ armine.sahakyan@escs.am:

«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/54» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով